Լևոն Մալխասյան

ՀՀ «Մովսես Խորենացի» շքանշանակիր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ



Ծնվել է 1945թ. Երևանում:

1952-62թթ. սովորել է Ալ. Պուշկինի անվան միջնակարգ դպրոցում, ապա 1962-67թթ. ուսանել Վ. Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտում՝ ռուսաց լեզու և գրականություն մասնագիտությամբ:

Եղել է կանադացի վիրտուոզ Օսկար Պիտերսոնի աշակերտը: Ելույթ է ունեցել տարբեր խմբերում, բեմ է դուրս եկել ավելի քան 40 երկրներում:

1960թ. Արմեն Թութունջյանի և Արթուր Աբրահամյանի հետ ստեղծել է ջազային եռյակ:

1968թ. Երևանում կայացած Համամիութենական փառատոնին ստացել է 1-ին կարգի մրցանակ: Լավագույնն է ճանաչվել նաև 1970թ. Կույբիշևում տեղի ունեցած Համամիութենական փառատոնին՝ վերստին արժանանալով 1-ին կարգի մրցանակի:

1972-ին ևս Վորոնեժում համամիութենական փառատոնին հաստատում է իր մրցանակային 1-ին տեղը «Լավագույն դաշնամուրային գործ» անվանակարգում:

1973-1980թթ. հանդես է եկել տարբեր խմբերում՝ «Կռունկ», «Ծիածան», «Սերպանտին»:

1980թ. Գեղագիտական կենտրոնին կից ստեղծել է առաջին ջազ ակումբը:

1983թ. հայաստանյան ջազմենների որոշմամբ ընտրվել է Երևանի ջազ ակումբի նախագահ:

1985-ին Երևանում՝ Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում, կազմակերպել է համամիութենական եռօրյա ջազային փառատոնը, 1986-ին՝ «Ջազային համայնապատկեր» մրցույթ-փառատոնը:

1996-ին Նյու Յորքի Միջազգային ջազային ասոցիացիայի որոշմամբ ստացել է պաշտոնական սերտիֆիկատ՝ Երևանում ջազային փառատոնը բարձր մակարդակով անցկացնելու համար:

1996-ին, վերականգնելով «Առագաստ» սրճարանը, այն վերածում է ջազ-ակումբի և սկսում կազմակերպել ջազ-փառատոներ: 1998-ին նրա ջանքերով կայանում է միջազգային ջազային հնգօրյա փառատոն՝ «Ինտերնեյշնլ ջազ ֆեսթիվալ» անվանումով: Հաջորդ ջազային փառատոնին՝ 2000-ին, մասնակցում է նաև ջազի արքա Չիկ Կորիան: 2006-ին ևս, ջազի 3-րդ միջազգային փառատոնի շրջանակում, Երևանը հյուրընկալում է աշխարհի հայտնի ջազմենների:

2006-ին հիմնադրում է «Մալխաս ջազ ակումբը»: Այժմ Լևոն Մալխասյանը ելույթ է ունենում «70-ականների նվագախումբ» խմբում՝ երիտասարդ երաժիշտների հետ: